

Բովանդակություն

- Ինչպես գրանցվել համակարգում
- Ինչպես լրացնել փորձագետի հարցաշարը

Գրանցումը համակարգում

Համակարգում աշխատելու համար անհրաժեշտ է մտնել <http://forms.anqa.am> հասցեով:

Բացվում է համակարգի մուտքի պատուհանը:

Եթե արդեն գրանցված էք համակարգում, ապա մուտքագրեք Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն ու ծածկագիրը համակարգ մտնելու համար:

Համակարգում գրանցվելու համար պետք է սեղմել «**Create an account**» կոճակը: Բացվում է նոր պատուհան, որտեղ պետք է մուտքագրել էլեկտրոնային փոստի հասցեն, անունը, ազգանունն ու ծածկագիրը: «**Register**» կոճակը սեղմելուց հետո, Ձեր էլեկտրոնային փոստի հասցեով կստանաք «**Confirm your account**» վերնագրով նամակը:


Նամակի տեքստում առկա հղումը բացելով՝ Դուք կհաստատեք Ձեր գրանցումը եվ այդուհետ համակարգ կարող էք մտնել Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն ու ծածկագիրը մուտքագրելով:

Փորձագետի հարցաշարի լրացումը

Համակարգում տեղադրված է 2 տեսակի հարցաշար .

- բարձրագույն ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի արտաքին գնահատման փորձագետի
- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտության կրթական ծրագրերի արտաքին գնահատման փորձագետի

Ընտրեք Ձեր հարցաշարը՝ սեղմելով համապատասխան վերնագրի վրա:



Վերնագրի վրա սեղմելուց հետո բացվում է հարցաշարը:

Յուրաքանչյուր վանդակում լրացվում է համապատասխան ինֆորմացիան:

Կան տեղեկտվական շրջանակներ, որոնք կարելի է մուտքագրել մի քանի անգամ: Դրանք են՝

- Լեզվական կարողությունները
- Մասնագիտական կրթությունը
- Հետբուհական կրթությունը/ասպիրանտուրան
- Գիտական աստիճանի շնորհումը

Աշխատանքային փորձը մասնագիտական ուսումնական հաստատություններում


- Կրթության կառավարման փորձառություն
- Որակի ապահովման գործընթացների կառավարման կամ մասնակցության փորձառություն
- Դասավանդման փորձառություն
- Հետազոտության փորձառություն
- Միջազգային աշխատանքի փորձառություն
- Վերապատրաստումներ (անցկացում կամ մասնակցություն)
- Փորձաքննության իրականացման փորձառություն

Նմանատիպ տեղեկատվությունը մի քանի անգամ մուտքագրելու համար անհրաժեշտ է սեղմել տեղեկատվության շրջանակի ներքևում գտնվող [+ Ավելացնել](#) կոճակը:

Օրինակ 1՝

Եվս մի լեզվի իմացություն ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել տեղեկատվության շրջանակի ներքևում գտնվող [+ Ավելացնել լեզու](#) կոճակը:

Կավելանա ևս մեկ տեղեկատվության շրջանակ, որտեղ կարող եք մուտքագրել լեզվի իմացությունը:



Օրինակ 2՝

Վերապատրաստման ուղրտի ևս մի փորձ ավելացնելու համար անհրաժեշտ է սեղմել տեղեկատվության շրջանակի ներքևում գտնվող **+ Ավելացնել վերապատրաստում** կոճակը:

Կավելանա ևս մեկ տեղեկատվության շրջանակ, որտեղ կարող եք մուտքագրել վերապատրաստման փորձը:

